


ՀՀ Վայոց ձորի մարզպետն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում

Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան

Ն.Գ. Իգոր Նազարուկին

02.02.2016



Այսօր պաշտոնական այցով ՀՀ Վայոց ձորի մարզում էր Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան՝ Ն.Գ. Իգոր Նազարուկը: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի հանդիպումը Իգոր Նազարուկի հետ:

Հ. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց այցի և Վայոց ձորի մարզի նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի գլխավոր խորհրդական Դմիտրի Մեմյոնովիչը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցության ընդլայնման և զարգացման հետ կապված մի շարք հարցեր, մասնավորապես գյուղատնտեսության, զբոսաշրջության, մշակույթի և արդյունաբերության ոլորտներին վերաբերող հարցեր: Տեղեկացնենք, որ 2013 թվականին Բելառուսի Հանրապետության Մինսկի և ՀՀ Վայոց ձորի մարզերի միջև կնքվել է առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության համաձայնագիր: Դեսպանն իր պատրաստակամությունը հայտնեց համաձայնագրում ներառված ոլորտների զարգացման ուղղությամբ գործնական քայլերի ձեռնարկման գործում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը նշեց, որ նշված համաձայնագրի շրջանակներում հարկավոր է մշակել նոր նախագծեր և ծրագրեր, որոնք ուղղված կլինեն միջմարզային համագործակցության և մեր երկու պետությունների միջև մշակութային, կրթական, առողջապահական ոլորտներում կապերի ամրապնդմանը:

Հանդիպման ավարտին երկու կողմերը միմյանց խորհրդանշական նվերներ հանձնեցին:

ՀՀ Վայոց ձորի մարզ կատարած այցի շրջանակում ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Իգոր Նազարուկը այցելեց Եղեգնաձորի մանկական երաժշտական դպրոց, որտեղ դեսպանին ներկայացվեց դպրոցի առօրյան, հաջողությունները և ձեռքբերումները, իսկ դպրոցի սաները փոքրիկ համերգային ծրագրով ողջունեցին հյուրերին:

Եղեգնաձորի երկրագիտական թանգարան կատարած այցի ժամանակ դեսպանը ծանոթացավ Վայոց ձորի մարզի պատմության մասին փաստող ցուցանմուշներին: